ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Պր. ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑԻ «ԲՂԴԷ» վէպի շարունակութեան տպագրութիւնը այս ամիս ընդհատուեց՝ հեղինակի նեարդային մի տկարութեան պատճառով, որի համար բժիշկները խորհուրդ են տուած նրան մի առժամանակ մտաւոր աշխատութիւնով իրան չը զբաղեցնել։

«ՄՈՒՐՃ»-ի ՎԷՊԵՐԸ։ Պարոն Ս. Մելիք-Շահնազարեանցի «Հայ գիւղացու սև օրը» վէպը վերջանալով, հետեւեալ համարից կարծում ենք թէ կարող կը լինինք սկսել Տիկին Մարիամ Խատիսեանի «Նինա» անունով բոմանը, որի մասին դեռ ևս անցեալ տարի լիշատակուեց «Մուրճ»-ում։

«ՀԱՑ ԳԻՒՂԱՑՈՒ ՍԵՒ ՕՐԸ» պ. Մելիք-Շահնազարեանցի վէպը շուտով լոյս կը տեսնի առանձին տպուած։ Վէպը բաղկացած կը լինի մօտ 160 երեսներից, «Ցեցեր» և «Կորածներ» վէպերի դիրքով։ Գինը նշանակուած է 40 կոպէկ և վաճառւում է թէ «Մուրճ»-ի խմբագրատանը, թէ գրավաճառանոցներում և թէ հեղինակի մօտ, որին պէտք է դիմել այսպէս՝ Баку. Саркису Меликъ-Шахназарянцъ, учит. въ Школѣ Арм. Человѣколюб. Общества.

«Հայ գիւղացու սև օրը» գրքով, «Մուրճ»-ի հրատարակութիւնների թիւը, 17 ամսեայ ընթացքում, հասնում է հնգի. այն է՝ „Ցեցեր“ Պռօշեանցի, „Խև Կարապետ“ Ատրպետեանի, „Երեխաների մարսողութեան հիւանդութիւնները“ բժշկ. Տէր-Գրիգորեանցի (Ղզլարցու), „Կորածներ“ Լէօի, և „Հայ գիւղացու սև օրը“ Մելիք-Շահնազարեանցի, բոլորը միասին 4.600 օրինակ։

Պ. ՍԱՂԱԹԷԼԵԱՆԻ ՑՕԴԻԱԾԸ „Համալսական հողատիրութիւնը Երևանեան նահանգում“ սկսում է տպագրուել ներկայ № 5-ից։ Ցօդւածը կ'ունենայ մի քանի շարունակութիւններ։

ՀԱՑՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԻՆ, նորա 50-ամեայ գործունէութեան տարեդարձին, „Մուրճ“-ի խմբագրութեան կողմից խմբագրից ուղարկուեց Վենետիկ մի շնորհաւորական հեռագիր։

ՊՐՕՖԵՍՕՐ ՋՈՒԲԻՆՈՎԻՆ, որի տարեդարձը լիսնամեայ գրական գործունէութեան՝ վրաց գրականութեան վերաբերեալ՝ լրացաւ մայիսի

13-ին, „Մուրճ“-ի խմբագրութիւնը լանձին խմբագրի ուղարկեց Պետերբուրգ հետևեալ բովանդակութեամբ հեռագիր՝

Профессору Чубинову

Редакція армянскаго журнала „Мурчъ“, поздравляя Васъ съ пятидесятилѣтнимъ юбилеемъ Вашей ученой дѣятельности, выражаетъ свою радость по поводу празднованія дорогаго для сосѣдей нашихъ—грузинъ—ученаго.

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ. Այս մայիսին Պոտիում վախճանուեց գնդապետ Ալեքսանդր Մելիք-Հայկազեանցը։ Հանգուցեալը լայտնի էր մանաւանդ իւր օժանդակութիւններով մի քանի հեղինակների գրուածքները ապագրելու համար։ Հանգուցեալի հաշուով տպագրուել են՝ Ռաֆֆիի „Կայծերը“, երկու հատոր, Աւ. Արասխանեանցի „Ազդաբնակութիւնը և նորա շարժումները“ և „Հողը և հասարակութիւն“-ը. (վերջինիս „Աշխատանքը և նորա բաժանմունքի սկզբունքը“ կիսով չափ պատրաստ գրուածքի տպագրութեան համար հանգուցեալից ստացուած է 100 ռուբլի. գրուածքը, տպագրուած՝ կը նուիրուի հանգուցեալի անուան)։ Տպագրուած է հանգուցեալի հաշուով նաև մի հայերէն գիրք. “Անդրկովկասի հայ զինուորների համար„։

Հանգուցեալը տուել է նաև կանոնաւոր օժանդակութիւններ և թոշակներ աշակերտների և համալսարանական ուսանողների։

ՆՈՑՆ ԱՑՍ ԱՄՍԻՆ վախճանուեց Պարիզում Մկրտիչ Սանասարեանը, որի ամենագլխաւոր գործն է Սանասարեան վարժարանը Կարինում (Էրզերում), որը հաստատեց հանգուցեալը երկարամեայ նախապատրաստութիւններից լետոյ, ունենալով արդէն մի խումբ պատրաստ ուսուցիչների, որոնք կրթուած էին իւր հաշուով գլխաւորապէս Գերմանիայում։ Վարժարանի նիւթական դրութիւնը ապահովացրած է կտակով։

ՊՐՈՖԵՍՈՐ ԴՈՔՏՈՐ ԼՈՐԷՆՑ ՖՈՆ ՇՏԷՑՆ-ի 50-ամեայ դոքտորական յոբելեանին, որ տեղի ունեցաւ նոր տոմարով մայիսի 20-ին, „Մուրճ“-ի խմբագիրը ուղղեց հռչակաւոր քաղաքատնտեսին և մտածողին մի շնորհաւորական նամակ, գերմաներէն լեզուով, որը առաջ ենք բերում թարգմանօրէն.

Մեծայարգ պարոն Պրոֆեսոր.

„Շնորհաւորելով Ձեզ, մեծայարգ պ. պրոֆեսոր, իմ խմբագրած մի հայկական ամսագրի անունից, Ձեր 50-ամեայ դոքտորական յոբելեանի առիթով, խնդրում եմ Ձեզ միաժամանակ ընդունէք հաւատիքը, որ այն, ինչ ինձ դրդում է այդ առիթով միաս Ձեր բազմաթիւ երկրպագուների հետ միանալ, այն ուժեղ կարիքն

է, որ զգում է մի աշակերտ՝ իւր շնորհակալութիւնը լայտնելու համար նրան, որին իւր ամենալարգելի ուսուցչապետների և հեղինակների թուումն է համարում, թէև նա Ձեզ անձամբ ճանաչելու բաղդը ունեցած չէ։

"Այս բոպէին ես վերցրի ձեռքս Ձեր գրուածքը՝ „Կինը քաղաքատնտեսական ասպարիզում„, որի համար առիթը աւեց մեր մի հռչակաւոր վիպասան և գրող հանդուցեալ Բաֆֆիի նոր հրատարակուած գրուածքը՝ „Հալ կինը և հալ երիտասարդութիւնը» և միայն այժմ իմացայ, որ լոյս է տեսել Ձեր վերջին գրուածքը երրորդ ապագրութեամբ՝ «Կինը, նորա կրթութիւնը և կեանքի կոչումը"։ Ես լոյս ունիմ, որ հայկական հասարակութիւնը „Մուրճ"-ին շնորհապարտ կը լինի, որ նորանով ծանօթանալ Ձեր գաղափարների հետ այդ մասին։

«Ընդունեցէք, մեծապարգ պ. Պրոֆեսոր, իմ ամենախորին լարգանքների հաւաստիքը»։

Մենք կ'աշխատենք մի ժամանակ մեր այդ խոստումը կատարել, որքան կարելի է շուտով. բայց „Մուրճ"-ի հետեւեալ համարում մենք կը շտապենք ծանօթացնել այդ գրական և դիտական հսկայի հետ, որով կարող է պարծենալ ոչ միայն գերմանական աշխարհը, այլ թերևս և մեր դարը։

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ։ Թիւ 6, լունիս, սկսում է տպագրել 1889 թւականին լոյս տեսած հայերէն հրատարակութիւնների ցուցակը այբբենական կարգով և առ այժմ լիշած են 41 հրատարակութիւններ։ Կազմողը ամեն մի գրքի վերնագրին կից ուղում է լիշատակել այն թերթերի անունները, որոնք քննադատած են լիշած ամեն մի հրատարակութիւնը։ Արդ մենք պէտք է լայտնենք, որ գործի այդ մասը թերի է։ «Մուրճ»-ի անունը այդ ցուցակում լիշատակուած է միայն չորս գրքերի առիթով, որոնց հեղինակներն են՝ 1) Աբեղեան, Աղամեանց, Աղաեանց քահանայ, Դալեմքէրեան. մինչդեռ «Մուրճ»-ի քննադատութիւնները չեն լիշատակուած հետեւեալ հրատարակութիւնների առիթով՝ 1) «Աղբիւր» (ցուցակում № 10), 2) Դոքտ. Բաբայեան (№ 24)՝ Բարակացաւ-թոքախտի մասին, 3) «Բազմավէպ» (№ 26), 4) Բալաշէդցի՝ Խասիբ (№ 28), 5) Գաբրիէլի Անդրէաս՝ Բնաւորութ. կրթութ. (№ 32)։ Այդպիսի անհոգութիւնը դարձնում է ցուցակի այդ բաժինը բոլորովին անհետաքրքրական։

Վերջին ժամին ստացանք՝

Калантаръ, Ал. А.—Агрономическая секція VIII съѣзда естество-испытателей и врачей въ С. Петербургѣ 1889—1890 года. (докладъ, чит. въ Кавк. Общ. Сельс. Хоз.)

Правленіе Попечительнаго Общества при Домѣ Трудолюбія.—Проектъ Учрежденія Общества по устройству сельскохозяйств. Колоній. С. Петерб., 1890.

ԱՆԱՆՈՒՆ՝—«Ազրաիլ», Ս. Պետերբուրգ, տպ. Սկորոխոդովի, գինն է 5 կ.։
» «Հաջի-Դիմիտր ու Ստեփան Կարագա», նոյն տպար. գինն է 3 կ.։
» «Սարկաւագ», նոյն տպարան, գինն է 5 կոպէկ։
» «Շամիլի դատաստանը», նոյն տպարան, գինն է 2 կոպէկ։

ԴՕՌԷ, ԱԼՖՕՆՍ՝—«Բերլինի պաշարումը», նոյն տպարան, գինն է 2 կոպ.։

ՎՐԻՊԱԿ՝ Անցեալ № 4-ում տպւած պ. Տէր-Միքէլեանցի յօդուածում, երես 595, հինգերորդ տող ներքևից, փակագծի մէջ պէտք է կարդալ՝ познаніе, մինչդեռ սխալմամբ տպւած է nosnanie.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱՒԳՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ